

Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ
գյուղ, գիտուր քեկնածու

ՄԹԵՐԱՅԻՆ ԳԼՈՒԽ ՍՈՒԻ
ՀԱՏԱԿՆ ԻԲՐԵՎԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՑԱՆՔԻ ՄՈՏԵՐԻԱԼ

635.25

4999

Մ-91 Մոկուրյան, Ե.

Մոկուրյան գլուխ սերի համ-
պատկերներ լուսապատճեն

1n. 204.

ՀՍԽԻ ՀՈՂԱԳԱՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ԴԱՇԱԳԱՐՄԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՑՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՅԱՆ

635.95

U-91

ԱՏՈՒԳՎԱՐ Է 1961

Ե. ՄՈՎԱՒՍՅԱՆ

ՄԹԵՐԱՅԻՆ ԳԼՈՒԽ ՍՈՒԻ ՀԱՏԱԿՆ
ԻԲՐԵՎ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՑԱՆՔԻ ՄԱՏԵՐԻԱԼ

六
七

18915

ՀԱՅՊԵՏՏՀԱՐԱՑ
ԵՐԵՎԱՆ 1943

Е. МОССИЯН
Донце продовольственного репчатого лука
как добавочный посадочный материал
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոխն ամենաստարածված, վիտամիններով հաբուստ բանաշարանցային կուլտուրաներից մեկն է. օգտագործվում է իր ամենապոքը հասակից սկսած մինչև լրիով հասունացման ժամանակը, օգտագործվում են նրա և՛ կանաչ օրգանները և՛ դլուխը, թե՛ չոր և թե՛ թարմ դրությամբ։ Սոխն օգտագործվում է մարդկային անողի մեջ, տարվա բոլոր եղանակներին, չառ բազմատեսակ ձևերով։ օգտագործվում է հում վիճակում իրբես կանաչեղեն, չառ տեղերում՝ կրակի մեջ խորոշած վիճակում, իսկ ճաշարաններում լայն չափով օգտագործվում է զրեթե ամեն տեսակի կրաքարեղիքի մեջ՝ իրքն համեմունք։ Կոնսերվի արդյունաբերության մեջ սոխը մեծ չափով սպասովում է թե՛ առանձին վիճակում և՛ թե՛ իրբե կրմաններ կամ համեմունք՝ զանազան բանջարեղեն ու մաեղեն կոնսերվաներ պատրաստելու ժամանակի։

Նկատի ունենալով սոխի նկատմամբ եղած մեծ պահանջը, առ մշակվում է այն բոլոր ռայոններում, որուղ նրա զարդացման համար կան չառ թե քիչ նարաստավոր պարմաններ։ Նոր ժշակվում է և՛ իրբե բանջարանոցային կուլտուրա՝ վոքր տարածություններով և՛ իրբեն դաշտային կուլտուրա՝ մասնագիտացած տնտեսություններում։ Այն շրջաններում, որտեղ ինչ-ինչ պատճառներով սոխի կուլտուրան չի դնում, կամ դեռ չի բուրացված, նրա սպասումը զնում է ի հաշիվ ներմուծվող սոխի այդպիսի զրություն է, օրինակ, Հայաստանի լեռնային ռայոն-

ներում, որոնք իրենց մթերային սոխի պահանջը ծածկում են Արարատյան գաշտավայրեց կամ հարեան ռեսպուբլիկաներից բերվող զլուխ սոխով: Նկատի ունենալով տրանսպորտի գժվարությունները և գլուխ սոխը պիտանի վիճակում երկար պահելու անհնարինությունը, վերջերս զլուխ սոխը չորացվում է Ա օգտագործվում իրրե չորացրած բանջարեղեն: Նկատի ունենալով բանջարեղենների սպառման անընդհատ աճը, անհրաժեշտ է համարվում զրանք մշակել իրենց իսկ սպառման գոտիներում: Այդ պատճառով էլ սոխի գրաված տարածությունը զնալով ընդգրածակվում է՝ ընդգրկելով նոր և նոր շրջաններ:

Սերմադաշտերում սոխի սերմ ստանալու համար անկում են մեծ քաշ ունեցող զլուխ սոխերը՝ հեկտարին մինչև 12 տոնն ընդհանուր քաշով: Թեև սոխի սերմի անհրաժեշտ քանակը մեկ հեկտարի համար շատ մեծ չէ (5—10 կտր), բայց նկատի ունենալով այդ սերմի պահանջի ընդհանուր քանակությունը, սերմի գեֆիցիտային լինելը և ինքնարժեքի բարձրությունը, ինպիր է դրվում նոր աղբյուրներ գտնել այդ գեֆիցիտը ծածկելու և սերմի ինքնարժեքը իջեցնելու համար:

Այն բոլոր վայրերում, որտեղ մեկ տարում սերմից գլուխ սոխ աճեցնելու գժվարություններ կան (օրինակ, ՍՍՌՄ-ի հյուսային մարզերում, Սիբիրում, Հայաստանի լեռնային շրջաններում և այլն), բայց առխուկներ տնկելով կարելի է ստանակ զլուխ սոխ, կարելի է նաև օգտագործել մթերային սոխի հատակն իրրե ցանքի մատերիալ: Եռոյն հաջողությամբ կարելի է այդ հատակներն օգտագործել սոխի սերմ ստանալու համար: Իսկ կանաչ սոխ կարելի է ստանալ ամենուրեք, այն էլ տարիվ բոլոր եղանակներին, իրրե ցանքի մատերիալ օգտագործելով վարձյալ մթերային զլուխ սոխի հատակը, մինչև այժմ անարժեք համարվող այդ թափուկը:

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒԽԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՏԱԿԻ ԲԻՈԼՈԳԻԱՅՑԻՑ

Գլուխ սոխը (*Allium Cepa L.*) պատկանում է միաշաքիլավոր բույսերի չուշանազգիների (Liliaceae) — ընտանիքն . նա չիմնականում բազմամյա բույս է . բազմանում է և՝ սերմով և՝ սոխուկներով : Սոխի սերմը նորաստավոր պայմաններում ծլելով, առաջի է սոխի բույսը, որը, նայած կլիմայական պայմաններին, առաջացնում է տարբեր մեծության գլուխ սոխ :

Հարավային տաք կլիմայի և երկար վեգետացիայի պայմաններում ցանքսի առաջին տարում ստացվում է լրիվ հասունացած գլուխ սոխ՝ երբեմն 200—300 գրամ քաշով : Գլուխ սոխը երկրորդ տարում տնկում են նրանից սերմ ստանալու համար, այդ գլուխը ոչնչանում է խսպառ : Սերմացու սոխը հակումն ունի հողում առաջացնելու նոր գլուխ սոխ, բայց որովհետեւ վերջին չի մնանալ, այդ պատճառով էլ հատուկ ուշադրության չել արժանացել :

Հյուսիսային և լեռնային դուրս և կարճ վեգետացիոն շրջան ունեցող մարզերում և լրջաններում առաջին տարում սոխը անտեսական տեսակետից լրիվ զարգացման չի հանում : Նա այդ տարում տալիս է մանր գլուխներ, որոնք մթերային նպառակներով անմիջական սրբուման չեն դնում, ինչպես նաև անմիջապես չեն օգտագործվում սոխի սերմ ստանալու համար : Այդ ժանր սոխուկները — աւոկները — երբեմն մեկ գրամից է՛լ պակաս քաշով, աշնանը հողից հանվում են, արեկ տակ լավ

չորացվում և ամբողջ ձմեռը պահպելով՝ 15—18^o ջերմության տակ, երկրորդ տարրվա զարնանը տնկվում էն՝ հասունացած զլուխ սոխ ստանալու համար։ Երկրորդ տարրում ստացված այդ զլուխ սոխն օգտագործվում է թե՛ մժերային նպաստակներով և թե՛ երրորդ տարրում սոխի սերմ ստանալու համար։


Այսպիսակ սոխի բույսը սերմից—սերմ լրիվ ցիկլը բոլորում է հարավում երկու տարրում, իսկ հյուսիսում, ցուրտ պայմաններում՝ երեք տարրում։ Առաջին գեղքում՝ միջանկյալ ստորգետն է հանդիանում զլուխ սոխը, երկրորդ գեղքում՝ անոնկը և զլուխ սոխը։

Որպեսզի վրուխ սոխը ծաղկացողուն (стРЕЛОК) տա կամ սերմ սոաջացնի, պետք է անցկացնի մի ցուրտ ձմեռ, որի ընթացքում նա յարովիդացիայի է ենթարկվում։ Առանց այդ ստաղիան անցնելու զլուխ սոխը նոր բույս կազմելով, շարունակաբար նոր դրուխ է տալիս։

Սևոկները—մանր սոխուկները—պարտադիր կարգով պետք է պահպանվեն ձմեռվա ցրտից, որպեսզի յարովիդացիայի չենթարկվեն։ հակառակ զեպքում այդ սոխուկներով կատարած ցանքսից առաջանում են ծաղկացողուններ՝ սերմի աննշան պրոցեսիայով։

Երկրորդ տարրում զլուխ սոխից նոր բույս առաջանալիս սողառվում է գլխի ամբողջ նյութը՝ անկախ գլխի մեծությունից։ Եշանակում է գլուխ սոխի աննղանյութերի մի պաշար է առաջար բույսի կազմակերպման համար։ Խոշոր գլմից ստացվում է խոսր բույս, սեռոկից՝ մանր բույս, բայց վերջինս, նարաստավոր պրյամաններում դառնվելով, կարող է առաջացնել նույնքան մեծ զլուխ։ Եշանակում է սոխի՝ աճեցման համար (նոր բույս առաջացնելու համար) անհրաժեշտ չէ, որ տնկվող սոխը մեծ քաշի դրուխ ունենաւ։ Նույնիսկ տնտեսական և աղբոտեխնիկական նկատություններով զերպասությունը շատ հաճախ արվում է համեմատաբար մանր սեռոկներին—սոխուկներին։ Օրինակ, Միսովսկով փորձնական կայսնի փորձերը ցույց են ավելի, որ այն ժամանակ, երբ սեռոկի միջին քաշը 0,74 գրամից հասցվել է 14,58 գրամի (ժամափորապես 20 անգամ մեծ), փորձամարդից ստացված ըերքը 53 կղ-ից հասել է 116,1 կղ-ի (2,19 անգամ), իսկ մեկ դրուխ սոխի միջին քաշը 128,6-ից դարձել է 141,5 գրամ (1,10 անգամ)։

Այս բալորը ցույց է տալիս, որ սոխի գլուխն այժմյան ժեմակթյան է հասցված շնորհիլ մարդու աշխատանքի. բույսի՝ իրեն զարդացման համար այդքան նյութի կուտակումն անհրաժեշտ չէ:



Նկ. № 1. Ծլող սոխ


Սոխից տճած սոխի բույսը մինչեւ ամառվակեսերը շատ գանգաղ է աճում. Նրա աճը գնում է վերերկրյա օրգանի, տերևների և փնջավոր արմատների առաջացման ուղղությամբ: Սոխի գլուխն սկսում է առաջանալ ամառվակեսերից սկսած և վերջանում է ուշ աշնանը—հոկտեմբերի վերջերին: Սոխի գլուխը հասունացած և տնտեսական տեսակետից պահելու պիտանի է համարվում այն ժամանակ, երբ բույսի տերևների հիմքը—կեղծ ցողունը—բարականում է և տերևներն ընկնում են: Այդ ժամանակ իրենց գործունեությունը գաղարեցնում ու ոչնչանում են նաև արմատները: Սոխը մտնում է իր հանգստի շրջանը:

Երբ սոխն այդ ստաղիայում հողից չի հանգում, իսկ աշնան օրերը շաբունակում են նպաստավոր լինել, նա սկսում է նորից կանաչել. առաջ են գալիս նոր աերեներ ու արմատներ՝ ի հաշիվ գլուխ սոխի, վերջինս արագությամբ մաշվում է ու պահելու համար անպետք է գառնում: Աշնանը չծլած և հողում մնացած գլուխ սոխը ձմեռն անց է կացնում հողում և գարնանից կանաչելով, սերմատուրույս է տալիս:

Սոխի գլուխը կաղմված է հատակից, մասի թեփուկներից, չորացած արտաքին թեփուկներից և կեղծ ցողունից (նկ. 1—5): Կեղծ ցողունն ըստ էության բույսի տերևների և թեփուկ-

Ների ձևավոխված դրությունն է . նրա մեջ ի մի են հավաքված թեփուկների ծայրերը :

Սոխի մասի թեփուկները կազմում են գլուխ սոխի ամենամեծ մասը և իրենցից ներկայացնում են ձևավոխված տերեներ : Նրանցում են կենտրոնացած սոխի սննդանյութերը , որոնք և օգտագործվելու են ապագա բույսի կազմակերպման համար : Այդ մասի թեփուկներն այնքան օժանդակ , երկրորդական գեր են կատարում , որ գլուխ սոխը պահելու ժամանակ նրանք առաջնաբար մաշվում են , նրանց նյութերն օգտագործվում են սոխի ներսում լրացուցիչ սրբոցեսների համար և ի վերջո վերածվում են չոր թեփուկների : Այն փաստը , որ ամենափոքր սոխի գլուխը (առողջ) նպաստալոր պարմաններում կարող է սոխի բույս առաջացնել , ինչպես նաև մեր այս աշխատության մեջ արված այն փաստը , որ մեծ գլուխ-սոխի հատակն իր վրա մնացած թեփուկների փոքր պաշարով ընդունակ է նոր բույս տալու , հաստատում են մեր այն թեղը , որ սոխի գոյությունը վեգետատիվ ճանապարհով շարունակելու համար անհրաժեշտ չէ նյութերի այն մեծ պաշարը , որը դանդում է մեծ գլուխ-սոխի մասի թեփուկների մեջ : Հետեւաբար ցանելու համար



Նկ. № 2. Սոխի երկայնակի հատած :

1. Չոր թեփուկներ 2—3. մասի թեփուկներ 4. արմառներ
5. հատակ 6. բողբոջ

ինչպիսի հաջողությամբ որ օգտադրծվում են սկզբները հյու-
սիսում, այնպես էլ կարելի է օգտադրծել սոխի հատակը՝
մատլի տերեների նվազագույն պաշարով:


Սոխի հատակը (ՃՈՒԾ) սոխի խիստ կարճացած ցողունն է,
որի վրա նստած են թեփուկները և բողբոջները (զատկի).
Հատակի ներքեւի մասից գուրս են գալիս նոր բույսի փնջաձե-
արժատները: Նշանակում է, որ սոխի հատակի վրա, ընդամենը
մի քանի միլիմետր չերտում քնած դրությամբ դժոնվում են ա-
ռաջագա բույսի սաղմային էլեմենտները: Սոխը վեղետատիվ ճա-
նապարհով բազմացնելիս էական դերը պատկանում է հատակին:
Սոխի մասի թեփուկներն օժանդակ գեր են կատարում հատա-
կից սկիզբ առնող բույսի նախնական աճի համար:

Սոխի հատակն ավելի կոշտացած—իայտացած կազմու-
թյուն ունի, քան թե մասի թեփուկները. այդ խիլ պատճառով
նա, իբրև կանոն, հեռացվում է զլուխ սոխից՝ նրան մթերային
նպատակներով օգտագործելիս: Այս փաստն իրեն հերթին ցույց
է տալիս, որ ապագա բույսի առաջացման համար ամենաէական
մասը հանդիսացող հատակը մարդկային սննդի համար համար-
վում է անպետք և ոչնչացվում է, այն ժամանակ, երբ կարելի
էր այդ հատակն օգտագործել իբրև ցանքի նյութ՝ սոխի վեղե-
տատիվ սաղմացման համար:

Սոխի հատակը, չնորհիվ իր ավելի փայտացած դրության,
ավելի լավ է պաշտպանված մի շարք աննպաստ պայմաններից,
քան թե մասի թեփուկները: Օրինակ, ձմեռային ցրտի ազդե-
ցության տակ, հաճախ է ցրտահարվում զլուխ սոխը, բայց,
իբրև կանոն, այդպիսի չափավոր ցրտահարությունից հետո
հատակը կենդանի է մնում այն ժամանակ, երբ ցրտահարված
զլուխ սոխը մեծ մասամբ անպետք է դառնում մթերային նպա-
տակների համար. այդ նույն ցրտահարված սոխի հատակը դար-
նանը ծլում է ու տալիս է նորմալ բույս: Ինչպես ցույց են տա-
լիս ամերիկական փորձերը, զլուխ սոխը կենսունակ է մնացել
նույնիսկ այն ժամանակ, երբ մեկ ամբողջ տարի պահվել է
+3 ջերմաստիճանի տակ: Գլուխ սոխից կտրած հատակները
մեր կողմից մի քանի օր պահվել են ձյան վրա ($մու-10^{\circ}$ -ի
տակ) և դարձյալ կենսունակ են մնացել:

Մթերային զլուխ սոխը վազ դարնանից սկսում է ծլել,
որի հետևանքով և արագությամբ ոչնչանում է. զլուխ հիմնա-
կան պատճառն այն է, որ նրա հատակի վրա դժոնվող բողբոջ-

ները կենդանի են: Գլուխ սոխը մթերային նպատակներով ավելի երկար պահելու համար Հայաստանի մի քանի շրջաններում դադելու կամ այլ միջոցով սպանում են սոխի հատակը:




Նկ. № 3. Սոխի լայնակի հատած:

Գլուխ սոխը և սոխուկը (սեռկը), ինչպէս առջեց, ցրտի ազդեցության տակ յարովիղացիայի են ենթարկվում, որից հետո տնկելիս նրանցից սերմ է ստացվում: Որպեսզի սերմ յարովիղացիայի չենթարկվի, նրան ամբողջ ձմեռը պահում են տաք պահեստներում, իսկ եթե նա արգեն ենթարկվել է ցրտին, բայց և նրանից դլուխ սոխ են ուղղում առանալ, ասդա գարնանը, ցանքուց առաջ 10—15 օրով տաքացնում են 25—30-ի տակ և հետո տնկում: Այդ ճանապարհով ալելանում է դլուխ տալու ընդունակությունը և պակասում է սերմացողուն տվող բույսերի թիւը: Դրա նմանությամբ ջերմությունը նույն ազդեցությունն է կատարում սոխի հատակների վրա, ինչպէս այդ կաեսնենք հաջորդ դիմում:

Սոխի հատակը կարելու ժամանակը բավական մեծ ազդեցություն ունի նրանից ստացվելիք բույսի դրության վրա: Աշնանը, երբ դլուխ սոխի բողբոջները գեռ չեն սկսել դարձանալ, կորած հատակն ընդունակ կլինի ավելի լրիվ սոխ տալու, որովհետև հատակը կարելիս նրա սաղմերն անվնաս են մնում: Ընդհակառակը, գարնանը կարելիս, երբ բողբոջները դարձնած են լինում և երբեմն՝ ծիլը սոխի դլուխ գութ եկած, հեռացվում են նաև բողբոջների, գուցե և ծաղկացողունների գաղաթները: Այդ դեպքում կարող է նկատելի չափով նվազել սերմի

պրոդուկցիան, բայց և այդ պատճառով կարող է բարձրանալ գլուխ տարրու ընդունակությունը։ Այդ գրությունը հաստատվում է մեր փորձերի այն վարիանտով, երբ ծլած բույսի ծաղկափթթյունը հեռացվել է ու նկատվել, որ այդ բույսի տակ դրուխ սոխն ավելի մեծ չափսի է հասնում։




Նկ. № 4. Համակի լայնակի հատածը միկրոսկոպի տակ
ա—կեղևային մաս, ն—գործունյա բջիջների
գոտի, բ—կենտրոնական զլան, շ—անոթային բողբոջներ։

Ինչպես հայտնի է, գլուխ սոխն իր մեջ մի քանի դուստր-ցաւաների սաղմեր է պարունակում։ այսինքն՝ մեկ գլուխ սոխը կարող է մե քանի ինքնուրույն բույսեր տալ՝ սխառութ գլխի նման։ Սոխի բազմազավակության այդ հատկությունը նույն-պու պատկանում է նրա հաստակին և պայմանավորվում է սոխի սորտից, զարգացման աստիճանից և մեծությունից։

Այս բոլորից երեսում է, որ գլուխ սոխի հատակը մի փոքր մասի թեփուկների հետ միասին նույն բիոլոգիական հատկություններն ունի, ինչոր սոխուկը (սկսկը), միայն այն աարեւ-րությամբ, որ ամելի զարգացած է ու ընդունակ է ամելի փար-թամ բույսեր տարու։ Մեր փորձերը ցույց են տվել, որ նպաս-տավոր պայմաններում հատակները ծլելով, տալիս են նորմալ բույսեր։ այդ բույսերից կարելի է ստանալ և կանաչ սոխ և գլուխ սոխ և սերմ, և որ ամելի հետաքրքրական է, հաճախ նույն բույսից միաժամանակ ստացվում է և սերմ և գլուխ սոխ։ Այդ բանին անընդունակ է ինչպես սերմից աճած սոխը (սուածին տարում), այնպես էլ մեծ գլուխը սոխից աճեցրած։

բաւյալը. վերջինս հթե նոր գլուխ էլ տալիս է, ապա նա այն-
քան փոքր է մնում, որ ուշադրության չի արժանացել պրակ-
տիկների կողմից:



Նկ. № 5. Հատումների գծերը՝ կես սոխի համար A—A
քառորդի համար B—B, հատակի համար C—C.

Դատելով գլուխ սոխի և նրա հատակի վերոհիշյալ բիոլո-
գիական հատկություններից և ելնելով մեր անցյալի փոքր փոր-
ձից, 1942 թվի սկզբին առաջարկ արվեց օգտագործել սոխի
հատակն իրար լրացուցիչ ցանքի մատերիալ, այնպէս, ինչպես
ակաղեմիկ լիսենկոն առաջարկեց օգտագործել կարտոֆիլի զա-
ղաթը: Այդ առաջարկության հետ միասին կատարվեցին մե-
շարք փորձեր, որոնց արդյունքների մասին հաղորդում ենք հե-
տևյալ դիմում:

ԵԲՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՄԱՍ

Այն ինդիբները, որոնք առաջադրվեցին տվյալ հարցը
կոմպլեքսային կերպով ուսումնասիրելու համար, կարելի է հե-
տեղյալ հինգ խմբերի բաժանել: —

ա) Ենչպիս է աղդում գլուխ սոխի տարրեր մեծության
կարողը սերմատիվության վրա.

բ) սոխի հատակից կարելի՞ է սոխի սերմ ստանալ.

գ) սոխից հատակից կարելից է գլուխ սոխ ստանալ.
դ) սոխից կտրած հատակներն ի՞նչպես պահել կենսունակ լինակում.

ե) հատակը կտրած սոխն ի՞նչպես պահել մթերային նպառակներով:

Փորձերը դաշտային-լաբորատորիական բնույթ են կրել:

Փորձերի պարմաններն առաջին երեք խնդիրների լուսաբանման համար եղել են հետեւյալները.

Յանքսի համար գլուխ սոխը ձեռք է բերվել Վաղարշիկյանից, 1942 թ. ապրիլի 18-ին: Դրանք Խաթունարևի տեղական սորտի երկու տարրերը մեծության գլուխներ են եղել. մեծ գլուխ սոխեր՝ 60 դր միջին քաշով և մանր սոխեր՝ 13 դր միջին քաշով: Սոխերն ամրող ձմեռը պահպահել են կոլխոզների սովորական պահետաներում (ցուրտ պահեստ), սոխի որոշ մասն այդ ժամկետին արդեն ծլել էր: Բոլոր սոխերն էլ յարովիղացիոն ստագիան արդեն անց էին կացրել, հետեւարար և նրանցով կատարված ցանքսը պետք է սերմ տար:

Դաշտային փորձերն այդ երեք հաբերի լուսաբանման համար կատարվել են դաշտավարական կայանի Երևանի բազայում: Հողը մուգ-գորշ գույնի է, ծանր-կավավաղային, թույլ կմախքով, կնճկային կազմություն ունի. դա միջին բերքատվության պարունդի հող է. այս փորձերի համար և նրանցից առաջ չեղարարացվել. ամրող մշակությունը տարվել է ձեռքով՝ սովորական բանջարանոցների մշակության նման:

Առաջին խնդրի լուսաբանման համար փորձը կատարվել է մեծ գլուխ սոխերի հետ՝ հետեւյալ չորս վարիանտներով:

1. Լրիվ սոխ 58,9 դր միջին քաշով.

2. Կես սոխ 28,9 դր միջին քաշով.

3. Քառորդ սոխ 16,2 դր միջին քաշով.

4. Սոխի հատակ 8,0 դր միջին քաշով:

Կես, քառորդ և հատակի հատումները կատարվել են գլուխ սոխի լայնակի ուղղությամբ և սմեն անդամ իրեւ ցանքի մատերիալ օգտագործվել է սոխի ներքին մասը. (տես նկ. № 5): Ցուրաքանչյուր վարիանտի համար վերցվել է 75 հատ սոխ. հատումները կատարվել են ապրիլ 22-ին, անկվել են ապրիլ 23-ին: Առաջին ջուրը տրվել է ապրիլի 27-ին:

Երբորդ և երրորդ խնդիրների լուսաբանման համար սոխերը և նրանց հատակները ենթարկվել են նախացանքային ջեր-

մային մշակության, նպատակ ունենալով յարովիզացված սուխից և հաստակեց կը կըն դլուխ սոխ ստանալ: Այդ փորձերը կատարվել են մանր գլուխ սոխերի հետ՝ հետեւյալ վարիանտներով:

5. Լրիվ սոխ առանց տաքացնելու.
6. Հաստակեց*) չտաքացրած սոխից.
7. Լրիվ սոխ 7 օր տաքացրած.
8. Հաստակ՝ 7 օր տաքացրած լրիվ սոխից.
9. Հաստակ առանձին՝ 7 օր տաքացրած.

10. Լրիվ սոխ 16 օր տաքացրած.
11. Հաստակ՝ 16 օր տաքացրած լրիվ սոխից.
12. Լրիվ սոխ՝ 30 օր տաքացրած.

13. Հաստակ՝ 30 օր տաքացրած լրիվ սոխից:

Զերժային մշակությունը կատարվել է հետեւյալ պայմաններում. ապրիլի 23-ին մեծ քանակությամբ սոխի դլուխներ դրվել են տերմոստատի մեջ՝ պահպանելով այսուղ 25° ջերմություն: Սահմանված ժամկետներին (7 օր, 16 օր և 30 օր հետո) տերմոստատից հանվել են 150-ական հատ սոխ, բաժանվել 2 մասի. 75 հատը տնկվել է լրիվ սոխի վիճակում, իսկ մյուս 75 հատը հատվել են և օդոտաղործվել են հաստակները: Փորձ արվեց նման ջերմացին մշակության ենթարկել նաև սոխից նախօրոք կտրած հատակները, բայց դրանցից ցանքի շատ թե քիչ պիտունի մատերիալ ստացվեց միայն 7 օր տաքացնելու ընթացքում (տես փորձերի 9-րդ վարիանտը). ավելի երկար պահված հաստակները ծածկվեցին անկերով, հոտեցին և փչացան:

Ուրեմն այս փորձերից ցանքը կատարվել է ոչ միաժամանակ, այլ՝

- 5 և 6 վարիանտները ապրիլի 23-ին.
- 7, 8 և 9 վարիանտները ապրիլի 30-ին.
- 10 և 11 վարիանտները մայիսի 9-ին.
- 12 և 13 վարիանտները մայիսի 23-ին:

Որպեսզի կարելի լիներ համեմատություն կատարել, այս փորձի տարրեր վարիանտների մեջն, անհրաժեշտ էր բոլորի համար հավասար տեղղությամբ վեղետացիոն շրջան ստեղծել. այդ իսկ պատճառով բերքահավաքը կատարվեց տարրեր ժամ-

*) Այս փորձերում հաստակների քաշը միջին հաշվով եղել է 4,0 գրամի ոտհմաններում:

կետներում՝ ինտերվալը պահպանելով դարձյալ 7, 16 և 30 օր, որով ստացվեց բոլոր վարիանտների համար 120 օրվա վեղետացիոն շրջանի տևողություն։

Ամբողջ վեղետացիայի ընթացքում բոլոր վարիանտների նկատմամբ տարվել է նույն խնամքը, ինչ որ մյուս փորձի համար՝ կատարվել են մի չափ Փենոլոգիական դիտողություններ ու չափումներ։


Առաջին չորս վարիանտների վերաբերյալ դիտողությունները տվին հետեւյալ արդյունքները։

Ամենից առաջ ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ բոլոր վարիանտներում էլ գրեթե միաժամանակ առաջացան բույսեր, բայց, ինչպես պետք էր սպասել, տարբեր հըզորության. այդ տարբերությունը մենաց մինչև վերջը և կազմում է բնական դիագրամմա. բույսերի բարձրության և ընդհանուր գրության պատկերը կարելի է տեսնել № 6 նկարում։

Երկրորդ երեսութն այն է, որ ինչքան փոքր կարոն է վերցվել, այնքան ավելի փոքր է եղել ծաղկացողուն տալու միջին ընդունակությունը։ Հատակից աճած բույսերն ավելի մեծ հա-

կումն են ցույց տվել նոր և համեմատաբար մեծ զբուխ առաջնելու, քան թե լրիմ սոխերից աճած բույսերը։ Նույնիսկ սկզբնական շրջանում հատակներից ստացված բույսերն այն աստիճան լավ էին, որ նրանց կարելի էր օգտագործել, իբրև կանաչ սոխ։

Հատակների մարզում ավելի քիչ թվով բույսեր ստացվեցին, քան լրիմ սոխի մարգերում։ Հատակների 12%-ը ըույս չտվեց. մայիսի 22-ին կատարված դիտողության ժամանակ հետեւյալ պատկերն ստացվեց. յուրաքանչյուր մարզում դրած 75 սոխից կային հետեւյալ թվով բույսեր։



Նկ. № 6.


Լրիվ սոխ 75 հատ 100% .

կես սոխ 75 հատ 100%

քառորդ սոխ 72 հատ 96%

հատակ 66 հատ 88%

Բերքահավաքը կատարվել է հետևյալ մեթոդիկայով . հաշվի է առնվել յուրաքանչյուր բույսից ստացված ծաղկափթթունի թիմը, սերմի քաշը, նոր դլուխ—սոխի թիմն ու քաշը . անհատական հաշվառումից հետո դուրս է բերվել միջին թվաքանականը՝ համապատասխան դրուպլաների սահմաններում :



Նկ. № 7.

Կոնտրոլ հանդիսացող լրիվ սոխի վարիանտից (№ 5), ինչպես նաև նույն ժամկետին տակված լրիվ սոխից և նրա հատակից ստացված բույսերի միջև մեծ տարբերություն չի եղել : Այդ ժամին զաղափար կարելի է կաղմել № 7, 8 և 9 նկարներից, որոնք վերաբերում են բույսերի "չ-լրիվ" հասունության ժամանակին :


Առաջին և երկրորդ փորձերից ստացված դլուխ սոխի բերքի տվյալները ամփոփված են № 1 աղյուսակում :

Երկրորդ փորձը (5—13 վարիանտները), որով աշխատել ենք պարզել երկրորդ և երրորդ խնդիրները, կատարվել է բոլորվին նույն պայմաններում, ինչ որ առաջին փորձը (1—4 վարիանտները): Ինչպես ասացինք, երկրորդ փորձի գլխավոր նպատակն էր պարզել թե նախացանքային ջերմային մշակությունն ինչպես է ազդում նախօրոք յարովիզացված սոխի և նրա հատակի վրա՝ նրանից սերմ կամ գլուխ սոխ ստանալու դեպքում: Երկրորդ փորձի մեջ հատակներից ստացված բույսերի թիմը և վիճակը գրեթե չի տարբերվել՝ նույն վարիանտներին

ԴԱՅԻՆԻ ՍՈՒՆԻ ԲԵՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՑ

Հ. Տ.	Փորձերի վարիանտները	Մերժակած բույսերը		Համապատակած բույսերը		Աղյուսակ 1.	
		Մերժակած բույսերը	%	Համապատակած բույսերը	%	Մերժակած բույսերը	%
1	Մեծ սոխ լրիզ	100	60,0	60,0	20,1	—	
2	Մեծ սոխի կեսը	100	71,1	71,1	14,3	—	
3	Մեծ սոխի քառորդը	100	78,8	78,8	9,5	—	
4	Մեծ սոխի հատակը	100	87,5	87,5	9,0	—	
5	Մանր սոխ՝ չտաքացրած	100	100	100,0	32,6	—	
6	Մանր սոխի հատակը՝ չտաքացրած	100	90,1	90,1	24,7	—	
7	Մանր սոխ 7 օր տաքաց.	83,3	94,4	79,0	79,9	170,0	
8	Հատակ 7 օր տաք. սոխից	42,8	100	42,8	116,7	169,0	
9	Հատակն առանձին 7 օր տաք.	90,5	100	90,5	86,1	146,0	
10	Մանր սոխ 16 օր տաք.	70,0	100	70,0	101,0	143,0	
11	Հատակ 16 օր տաք. սոխից	45,0	100	45,0	97,6	107,0	
12	Մանր սոխ 30 օր տաք.	62,0	100	62,0	96,0	180,3	
13	Հատակ 30 օր տաք. սոխից	41,0	100	41,0	75,0	142,0	

Աղյուսակի թվերից երեսում է, որ սերմ կամ ծաղկացողուն տալու ընդունակությունը չտաքացրած սոխերի նկատմամբ, թե՛ մեծ և թե՛ մանր սոխերի դեպքում, ինչպիս նաև հարած մեծ սոխերի և նրանց հատակների նկատմամբ արտահայտված է $100^{\circ}/_{\text{o}}$ -ով. սա նշանակում է, որ սերմացու մատերիալը լրիվ յարովիզացեալի է ենթարկված եղել, իսկ յարովիզացված սոխի թի՛ մանր տեսակները և թե՛ նրա կտրած հատակները բիոլոգիական իրարեց ոչնչով չեն տարբերվել: Բայց նախացանքային ջերմային մշակության աղցցության տակ ծաղկացողուն տալու ընդունակությունը նկատելի չափով մկնել է նվազեք ըստ որում այդ նվազումը մեծացել է ջերմային մշակության տևողու-



Կ. և 8.

թյան երկարացման հետևանքով, ինչպես նաև ավելի սուր է արտահայտված հատակների, քան թե նույն վարիանտին զուգահեռ լրիվ սոխերի նկատմամբ:

Չորրորդ սյունակի թվերը, միայն աննշան բացառությամբ, ցույց են տալիս հակառակ մի պատկեր՝ սոխերի նոր գլուխ առաջացնելու ընդունակության վերաբերյալ. Եթեմային մշակության ենթարկված սոխերը և նրանց հատակները 100%-ով ընդունակություն են ցույց տալիս նոր գլուխներ առաջացնելու, ջերմային մշակության չենթարկված խոշոր գլուխների այդ ընդունակությունը օրինաչափորեն աճել է անկվող մատերիալի փոքրացմանը զուգընթաց: Նշանակում է որքան քիչ մսալի թեփուկներ են թողնել հատակի վրա, այնքան ավելի շատ թվով բույսերն են նոր գլուխ առաջացրել: Սերմացու սոխի՝ հողում նոր գլուխ սոխ առաջացնելու ընդունակությունը, ինչպես երկվում է, ընդհանուր բիոլոգիական երևույթ է. միայն թե մերայս փորձերում այդ երեսույթը որոշ չափով տարբեր արտահայտություն է գտել՝ տարբեր մեծության սերմացու մատերիալ օդտաղործելիս:



Նկ. № 9.

Դրանք մի տեսակ հակադիր հատկություններ են. որքան մեծ

Այս և նախորդ երեխույթն ամենից առաջ ցույց են տալիս, որ սոխի հատակն ըստ էության ցանքի նույն տիպի մատերիալ է, ինչ որ սևոկը հյուսիսում: Հատակն իրեն մեջ պահպանում է լրիվ սոխի բիոլոգիական բոլոր հատկությունները, եթե նրա վրա թողնվում է սննդանյութերի (մսալի թեփուկների) նվազագույն քանակություն. մեծ սոխի հատակն օժտված է նույն մեծ սոխի բիոլոգիական հատկություններով:

Այս երկու փաստերը (ծաղկացողուն և գլուխ սոխ տալու ընդունակությունները) միաժամանակ ցույց են տալիս, որ

չափով է արտահայտվել մեկը, այնքան թույլ է արտահայտվել մյուսը:

Այն փաստը, որ նախացանքային ջերմային մշակության աղղեցության տակ պակասել է ծաղկացողուն տալու ընդունակությունը և մեծացել է գլուխ սոխ առաջացնելու ընդունակությունը, ցույց է տալիս, որ այստեղ կատարվում է բոլողութապես խթառ հետաքրքիր մի երեսություն։ նախապես յարովիզացված սոխը ջերմության աղղեցության տակ պակասեցնում է ծաղկացողուն տալու ընդունակությունը։ Այս երեսությն ավելի սուր է արտահայտված այն վարիանտներում, երբ իբրև ցանքի մատերիալ օգտագործվել է նախօրոք տաքացրած սոխից կորած հատակը (8, 11 և 13 վարիանտները)։ Եթե այս երեսությն օրինաչափորեն նկատվի նաև հետադարյում և եթե այն ուրիշ պատճառ չունենա, ապա պետք է ենթադրել, որ լիսենկոյի ուսմունքի այն մասը, որը վերաբերում է բույսերի զարդացման սոտադիայի (գոնե յարովիզացիայի) անհետադարձելիությանը, բացարձակ չէ։ Հարկավոր կլինի որոշ խմասով վերանայել թեորիայի այլ մասը։ Պետք է արձանագրել, որ այս երեսությը նույն օրինաչափությամբ պրակտիկայում նկատվել է սևակների նկատմամբ, երբ ցրտի ենթարկված սևովկը ցանքի համար օգտագործելուց առաջ մի քանի օրով ջերմային մշակության է ենթարկվում՝ նրա սերմ տալու ընդունակությունը պակասեցնելու նպատակով (3)։

Աղյուսակի 5-րդ սյունակի թվերը ցույց են տալիս, որ մեծ գլուխ սոխից աճեցրած բույսերն ավելի քիչ չափով են կրկնակի պրոդուկցիա (սերմ և դլուխ սոխ) տալիս, քան նրա հատվածները և հատակը (տես՝ 1—4 վարիանտները)։ մանր սոխերի նկատմամբ տեսնում ենք հակառակ պատկերը։ լրիվ մանր սոխը ջերմային մշակության տակ (5, 7, 10 և 12 վարիանտները), ավելի միակողմանի պրոդուկցիա (գլուխ սոխ) է տալիս։ այդ համարվում, որովհետեւ մեկը մեծ չափով է արտահայտվում նույն սոխերից կորած հատակների վրա։ Սոխաբուժության պրակտիկայում այս երեսությը—կրկնակի պրոդուկցիա տալը—ցանկալի չէ համարվում, որովհետեւ մեկը գնում է մյուսի հաշվին։ Բայց այս փաստը մյուս կողմից ցույց է տալիս, որ սոխն էլասոմիկ մի բույս է և մեր ցանկությամբ կարելի է զարդացնել նրա սերմ կամ գլուխ, տալու հակումը։ Օրինակ, սերմաբուժական նպատակներով հարկավոր կլինի լրիվ յարովիզացնել ցանքի

մատերիալը։ Ոչ-սերմաբուծական տնտեսություններում (առանձնապես լեռնային և հյուսիսային մարզերում) սեփական գլուխ սոխ ստանալու նստատակով հարկ կլինի սոխի հատակները հավաքել այն սոխերից, որոնք ձմռան ընթացքում պահպել են տաք պահեստներում։ Մյուս հատակները դարնանը տնկելուց առաջ հարկավոր կլինի մի քանի օրով ջերմային մշակության և թարկելու ապա տնկել։

Աղյուսակի վերջին երկու սյունակների թվերը ցույց են տալիս առացված գլուխ սոխերի մեծությունը գրամմերով։ Դրանցից առանձնապես ուշագրավ է այն, որ նոր գլուխ սոխ ստանալու համար ավելի նպատակահարմաք է օգտագործել սոխի հատակը, այն էլ նախացանքային ջերմային մշակության ենթարկելուց հետո, որովհետև այդ դեպքում ստացվում են ավելի խոշոր գլուխներ, որոնց քաշը միջին հաշվով հասնում է 100 գրամի։ առանձին գլուխներ են եղել մինչև 250 գր քաշով։ Հատկապես հետաքրքիր է զիտել վերջին սյունակի թվերը։ Դրանք ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ հաջողվում է առանալ լրիվ կերպով չշարովիզացմած բույսեր, ապա ստացված գլուխ սոխերը, իբրև կանոն, կը ունի ամենի ծանր, միջին հաշվով 100—180 գր։ Եղել են առանձին գլուխներ մինչև 300 գր քաշով։

Կայանի դիտ։ աշխատող ընկ Բարաջանյանի դիտողությունները ցույց առին, որ երբ ծաղկելուց առաջ բույսից հեռացվում է ծաղկափթյունը, առա բույսը հողում ամենի է մեծացնում նոր գլուխը։

Սոխաբուծական-սերմաբուծական պրակտիկայում թե՛ նկատել են նոր սոխուկներ ստացանալու փաստը, բայց սովորաբար անտեսել են այդ։ Ինչպես երեսում է մեր այս աշխատողությունից և զիտողություններից, այդ սոխերի քաշը տատանվում է 10—20 գրամի սահմաններում։ Եթե մինչև այժմ դա անտեսվել է, ապա ներկայումս խորհուրդ պետք է տալ վերոհիշյալ տնտեսություններին՝ օգտագործել սննդանյութերի նաև այդ փոքր աղբյուրը։

Փորձերից ստացված սոխի սերմի բերքի տվյալները, ինչպես նաև սերմի մի քանի հատկությունների մասին եղած տվյալներն ամփոփված են № 2 աղյուսակում։


ՍԵՐՄԻ ԲԵՐՔԸ ԵՎ. ՈՐԱԿԸ

Հ. Ա.	Փորձերի վարիանտները	Մերժակած բույսերը	Մերժի բույսերը	Մերժի բաշխությունը	Մերժի բաշխությունը	Մերժի բաշխությունը	Մերժի ծլունակությունը	Մակում	
								3 օ- րում	7 օ- րում
1	Մեծ սոխ լրիդ	100	5,85	5,85	4,47	77	98		
2	Մեծ սոխի կեսը	100	4,60	4,60	4,68	79	97		
3	Մեծ սոխի քառորդը	100	1,68	1,68	4,57	85	99		
4	Մեծ սոխի հատակը	100	1,54	1,54	4,16	74	96		
5	Մանր սոխ՝ հատաքացըրած	100	4,13	4,13	5,08	68	100		
6	Մանր սոխի հատակ չտաք.	100	2,70	2,70	4,95	74	97		
7	Մանր սոխ 7 օր տաքաց.	83,3	3,81	4,58	5,38	72	99		
8	Հատակ 7 օր տաք. սոխից	42,8	1,47	3,38	6,10	78	96		
9	Հատակն առանձին 7 օր	90,5	2,36	2,61	5,06	67	96		
	տաք.								
10	Մանր սոխ 16 օր տաք.	70,0	2,18	3,11	5,47	52	97		
11	Հատակ 16 օր տաք. սոխից	45,0	0,95	2,12	5,27	65	100		
12	Մանր սոխ 30 օր տաք.	62,0	0,87	1,40	5,65	74	95		
13	Հատակ 30 օր տաք. սոխից	41,0	0,56	1,37	5,27	67	89		

Աղյուսակի 4-րդ սյունակի թվերը ցույց են տալիս սերմի պլոտուկցիան գրամներով, 1 բույսից, ներառյալ նաև սերմ չտված բույսերը, իսկ 5-րդ սյունակում՝ նույն տվյալները սերմ տված բույսերի նկատմամբ։ Այստեղից պարզ երկում է, որ ինչքան փոքրացվել է ցանքի մատերիալը, այնքան նվազել է մեկ բույսից ստացված սերմի քանակը (1—4 վարիանտներում)։ Մեծ լրիդ սոխից (60 գր քաշով) նրա կետն անցնելիս սերմավությունը նվազել է համեմատաբար քիչ չափով (1,25 գր մեկ բույսից), բայց կես սոխից քառորդին անցնելիս նվազումը չեծ է եղել (մոտ՝ 3 գրամ)։ Հատակից աճեցրած բույսը գրեթե նույնքան սերմ է տվել, ինչքան և քառորդ սոխից ստացված բույսը:

Մանր սոխերի և նրանց հատակների նկատմամբ (5—13 վարիանտները) նույն պատկերն է նկատմում, թեև այստեղ հատակներից ստացված սերմի քանակն ավելի քիչ չափով է հետ մնում լրիդ սոխից, իսկ մանր լրիդ սոխից (5-րդ վարիանտ) ստացվել է զրեթե նույնքան սերմ, ինչքան և խոշոր սոխի կերպով (30 գր)։

Նախացանքային ջրմային մշակությունն այնքան չի պահանջը սերմի քանակը մեղ սերմ տված բույսից, որքան մե-



Նկ. № 10. Հատակով կատարված ցանքսից ստացված սոխեր. առաջինը՝
սերմ և գլուխ սոխ, երկրորդ՝ միայն գլուխ սոխ.

ծացրել է դլուխ սոխի քաշը։ Զերմային մշակության հնթարկված սոխից կամ հատակից աճած այն բույսերը, որոնք ավել են և՛ սերմ և՛ դլուխ սոխ, առանձնապես ուշադրության արժանի են այն տեսակեալից, որ գրեթե առանց նվազեցնելու սերմի պրոցուկցիան, ավել են խոչոր դլուխներ՝ երեմն մինչև 200 գր քաշով։ Ինչպես երեսում է № 10 նկարից, այդ նոր բույսերի հատակից դուրս են գալիս առանձին տերևներ ու ծաղկացողուն՝ և նրա վրա լինում է լրիվ մեծության հասնող ծաղկափթյուն։ նույն հատակից սկիզբ է առնում նաև նոր մեծ պլուխ սոխը. դրանք կարծեք թե իրարից անկախ բույսեր լինեն՝ իրենց հատակներով մեխանիկորեն իրար կտած։ Եթե սոխի բույսը տալիս է և՛ սերմ և՛ դլուխ սոխ, ապա դլուխ սոխը լրիվ մեծության է հասնում ոչ այնքան մեկ ծաղկափթյունից սոացյլելիք սերմի, որքան ծաղկափթյունից թվից հաշվին։

Որ անկված սոխի քաշի նվազումը կամ սոխի հատակով կատարած ցանքը պակասեցրել են մեկ բույսից ստացված սերմի քանակությունը, այդ ինքնին հարկանալի է և տարօրինակ կլեներ հակատակն սպասելը. բայց, ինչպես հետեւում է ներկա աշխատությունից, հնարավոր է սոխի հատակներով կառուարկած ցանքսի միավոր տարածությունից ստանալ սերմի լրիվ քանակություն, եթե կատարվի ավելի խիտ ցանք։ Մեկ բույսից ստացվող սերմի պակասը կարելի կլինի ծածկել բույսի թիվն ավելացնելու միջոցով։ Ինչպես երեսում է այս աշխատության անունից, սոխի հատակն առաջարկվում է իրեն ցանքի լրացուցիչ և ոչ-երբեք իրեն հիմնական մատերիալ, կամ նրան հայաստ արժեք ունեցող մատերիալ։ Բայց այսաեղ կարևոր ենք համարում կանդ առնել հետեւյալի վրա. սոխի սերմարուծությամբ դրապիզող տնտեսություններում ընդունված է հետեւյալ միջին նորման. մեկ հեկտարի վրա տնկում են 10—12 տոննա ամենաըստիր դլուխ սոխ ու դրանից ստանում են միջին հաշվով 4—5 ցենտներ սոխի սերմ։ Եթե տնկվող յուրաքանչյուր դլուխ սոխի քաշը միջին հաշվով ընդունենք 50—60 գր, ապա մեկ հեկտարի վրա ստացվում է 200 հազար բույս. այդ գեպքում 4—5 ցենտներ սերմը կկազմի 2,0—2,5 գր սերմ յուրաքանչյուր բույսից։ Այս հաշվումների արդյունքները մեր փորձների ավագների հետ համեմատելիս ամենից առաջ երեսում է, թե ինչքան ցածր է սոխի սերմի ընդունակություններում, մինչդեռ լայլ ինսամքերի և անկորուստ հավաքի դեպքում

կարելի կլինի հավաքել առնվազն 2 անգամ ավելի սերմ։ Հաշվությունը մյուս կողմից ցույց են տալիս, որ սոխի հատակին երրորդ կատարված ցանքից կարելի է ստանալ նույնքան սերմ, ինչքան ստանում են վերոհիշյալ տնտեսությունները, օդտաքործելով դրա համար ոչ թե 12 տոննա սոխ, այլ 1—2 տոննա հատակ։

Ուշադրության արժանի է նաև այն, որ սոխի սերմ ստանալու համար երբեմն կարելի է օդտագործել նաև համեմատաքար փոքր քաշի սոխերն իբրև ցանքի մատերիալ։

Երկրորդ աղյուսակի 6, 7 և 8 սյունակների թվերը ցույց են տալիս ստացված սերմերի մի քանի որակական հատկությունները։ Ամենից առաջ երեսում է, որ տնկվող գլուխ սոխի քաշը պակասելու դեպքում երբեք էլ չեւ պակասում ստացված սերմի բացարձակ քաշը (հաճախ նույնիսկ բարձրանում է)։ Ծլունակության թվերը ցույց են տալիս այդ սերմերի կենսունակությունը, որ և մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ նրանք պիտանի են ցանքի համար։ Թե ինչպես է անդրադառնում այդ սերմը սոխի գլխի մեծության ու այլ որակական ցուցանիշների վրա, երբ նրանով կատարվելու լինի ցանքը, այդ մասին առանց փորձնական տվյալների եղբակացություններ չենք ուզում տնել։ Բայց եղած փաստերը նախատիյալներ են հանդիսանում ոչ բացասական եղբակացությունների համար։

Սպառակ № 3

№ №	Փորձերի վարիանտները	Մեկ բույսից ստացվել է		Ցանքած 1 զր նյութից ստացվել է	
		գլ ուժ	սերմ	գլ ուժ	սերմ
1	Մեծ սոխ լրիվ	20,1	5,85	0,34	0,10
2	Մեծ սոխ կեսը	14,3	4,60	0,48	0,15
3	Մեծ սոխ քառորդը	9,5	1,68	0,60	0,18
4	Մեծ սոխ հատակը	9,0	1,54	1,13	0,19
5	Մանր սոխ չտաքացրած	32,6	4,13	2,50	0,32
6	Մանր սոխ հատակը, չտաքաց	24,7	2,70	6,17	0,67
7	Մանր սոխ 7 օր տաքացրած	79,9	3,81	6,15	0,29
8	Հատակ 7 օր տաքացրած սոխից	116,7	1,47	29,20	0,34
9	Հատակն առանձին 7 օր տաքացրած	86,1	2,36	21,52	0,59
10	Մանր սոխ 16 օր տաքացրած	101	2,18	8,61	0,21
11	Հատակ 16 օր տաքացրած սոխից	97,6	0,95	21,97	0,24
12	Մանր սոխ 30 օր տաքացրած	96,0	0,87	7,30	0,08
13	Հատակ 30 օր տաքացրած սոխից	75,0	0,56	18,52	0,10

Գլուխ սոխի և սերմի բերքատվության տվյալները և մէ
բերելու համար, ինչպես նաև այդ հարցերին վերաբերող նյու-
թը վերջացնելուց առաջ նայենք և Յ Յաղուասակը.

Աղյուսակից պարզ երկում է, որ հասակներից միշտ էլ
կարելի է սերմ ստանալ, եթե նրանք յարովիզացված են, բայց
այն գեղքում, երբ նպատակ է գրվում այդպիսի մատերիալից
ստանալ միայն գլուխ սոխ, դեռ որոշ դժվարություն կա, որը
պետք է հաղթահարել: Երկում է նաև, որ սերմի և գլխի պրո-
դուկցիան, ինչպես ասվել է, կարծեք թե իրար հակալիք մե-
ծություններ են. մեկի ավելացման դեպքում մյուսի քանակը
փոքրանում է. բայց եթե չմուսնանք, որ այդ երկու արժեքա-
վոր պրոդուկցիաները ստացվում են միենույն ցանքից, ապա
պարզ է զառնում, որ, իրեւ գործի սկզբու, գլուխ սոխի հետ
միաժամանակ կարելի է սերմ ստանալ նաև ոչ-սերմարուծական
տնտեսություններում, քանի որ սոխի սերմի պահանջը միշտ և
ամենուրեք մեծ է:

Երրորդ աղյուսակի վերջին երկու այունակների թվերը
ցույց են տալիս միայն այն, թե ինչպիսի օրինաչափությամբ
բարձրանում է մեկ միավոր ցանկած մատերիալից ստացվող
պրոդուկցիան, այն ժամանակ, երբ այդ մատերիալը նվազելիս
փոքրանում ու զերոյի է հավասարվում նրա մթերային արժեքը:
Առանձնապես արագ է մեծանում դլուխ սոխի պրոդուկցիան՝
նախօրոք տաքացրած սոխի հատակն իրեւ ցանքի մատերիալ
օդապարծելիս:

Գլուխ սոխից կտրած հատակները մինչև ցանելը կենսունակ
վիճակում պահելու հարցը խիստ կարևոր գործնական նշանա-
կություն ունի: Բանն այն է, որ սոխի հատակները կարելի է
հավաքել տարվա բոլոր եղանակներին և ամենուրեք, որտեղ
սպառվում է մթերային դլուխ սոխը. բայց միշտ և ամենուրեք
չէ, որ կարելի է նրանցով ցանք կատարել:

Կտրած հատակները պահելու վերաբերյալ մինչև այժմ կա-
տարված մեր ուսումնակիրությունները և դիտողությունները
Հիմք են տալիս ասելու, որ նրանց կենսունակ վիճակում պա-
հելու հարցը կարող է առաջ գտլ միայն աշնանից—գարուն ըն-
կած ժամանակամիջոցից համար, երբ ցանք անելու հնարավորու-
թյուն չկա. մյուս բոլոր ժամանակներում (վաղ գարնանից
մինչև ուշ աշուն) կտրած հատակներն անմիջապես կարելի է
օդապարծել ցանելու համար, ուստի և նրանց նկատմամբ վե-

բանում է պահելու անհրաժեշտությունը։ Աշնանը, մինչև հողի
սառչելը, հատակներով կարելի է աշնանացան կատարել և ստա-
նալ կանաչ սոխ ու սոխի սերմ։ Նույն հաջողությամբ կարելի
է թարմ հատակներով ցանք կատարել վաղ գարնանից սկսած
մինչեւ ամառվա վերջն ու ստանալ կանաչ սոխ, դլուխ սոխ և
սերմ, նայած սոխի (հատակի) չարովիզացված կամ ոչ-յարո-
վիզացված դրությանը։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում կտրած
հատակները կարելի են չպահել։ Բայց այն հանդամանքը, որ
կտրած հատակների քանակն այդ ամբողջ ժամանակամիջոցում
խիստ քիչ-քիչ է ստացվում, մինչդեռ ցանկալի կլիներ այդ բո-
լորը հավաքել և նրանցով կատարել մեկ կամ երկու ժամկետա-
յին ցանք, ստիպեց մեզ ուշադրություն դարձնել նաև այդ հար-
ցի վրա։ Փորձերը ցույց տվին, որ կտրած հատակները կենսու-
նակ պահելուն խանդարում են միկրոօրդանիզմները, որոնք
մեծ արագությամբ (մի քանի օրում) ոչնչացնում են հատակը։
Ուստի հատակը կենսունակ պահելու համար ամենից առաջ պետք
է պայքարել այդ միկրոօրդանիզմների դրունեության դեմ,
սակայն առանց վնասելու սոխի կենսական էլեմենտներին։ Այս
տեսակետից սոխը կարտոֆիլի պալարից տարբերվում է նրանով,
որ վերջինիս դագաթը կտրելու առաջանում է խցանային կեղև
ու դրանով պալարը պաշտպանվում է վնասատուներից։ Սոխն
արդիմի հնարավորություն չունի։

Փորձ արվեց չորացնել կտրած հատակները և դրանք պահել
ողաչոր վիճակում։ այդ նպատակով կտրած հատակները փոսի-
ցին սենյակային ջերմաստիճանի տակ, բարակ շերտով։ Փոր-
ձերը ցույց տվին, որ հատակների կենսունակությունը կորչում
է դեռ օգաչոր վիճակի համեմուց առաջ։

Փորձ արվեց նաև հատակները պահպանել Փորձալինի և
այլ թունավոր նյութերի գոլորշիների մեջ։ Այդ գեպքում թեև
վնասատուները չեն կարողանում դարգանալ, բայց և ոչնչանում
է ինքը՝ սոխի հատակը։

Ի վերջո գործադրվեց ցրտի մեջ պահելու միջոցը։ Փորձը
կատարվեց հետեւյալ կերպ։ դլուխ սոխից կտրած հատակները
ձմեռված կիսին պահպեցին ձյան վրա, որսում, երբ ջերմա-
տիճանը— 10° -ի աշխաններում էր։ այդ պարզաններում հա-
տակները սառած վիճակում 10 օր պահելուց հետո ծլելու հա-
մար գրվեցին տերմոստատի մեջ։ պարզվեց, որ հատակները
պահպանել էին իրենց կենսունակությունը։ Այս փորձերից ել-

նելով, եկանք այն եղրակացության, որ հատակները կենսունակ լինակում պահելու ամենապարզ միջոցն առաջմամբ պետք է համարել ցուրտը: Գարնանից-աշուն ընկած ժամանակամիջոցում, եթե հարկ լինի պահել հատակները, պետք է օդտագործել ցուրտ նկուղները, միջանցքները, ծածկերը, ձեղնահարկերը: Հատակներով լցրած արկղները կարելի է պահել նույնիսկ բացօթյա:

Սակայն բոլոր դեպքերում, երբ արդ հնարավոր է, սոխի հատակները լավ կլինի պահել հողի մեջ, թեկուղ ձմեռվա կիսին: Մեր կարծիքով դա հատակները պահելու լավագույն եղանակն է: Ամբողջ ձմեռվա ընթացքում կանաչ սոխ ունենալու կամ նույնիսկ գարնանը սոխի շիթիներ պատրաստելու համար սոխի հատակները կարելի է տնկել ջերմոցներում: Ուսո՞ի, որ տեղ դա հնարավոր է (ջերմոցներում, տաք բնակարաններում և այլն), սոխի հատակները կարելի է տնկել հողով լցրած արկղների մեջ ու ատանալ կանաչ սոխ:

Վերջին հարցը, որ ծաղում է սույն աշխատության կապակցությամբ, այն է, թե որքան ժամանակ պիտանի միջակում կարելի է պահել մթերային սոխը, որից կարվել է նրա հատակը: Այս խնդիրը մենք համարում ենք բոլորովին երկրորդական, այն տեսակետից, որ մեր առաջարկությամբ մթերային սոխից նրա հատակը պետք է կտրել սոխի օդտագործման ժամանակ և ոչ թե նախօրոք: Այդ տեսակետից կարելի էր այս հարցի վրա նույնիսկ կանոն չառնել. սակայն այս միջոցառումը հետաքրքիր կարող է լինել այն գեղքերում, երբ ուղղում են սոխի հատակով աշնան կամ գարնան որոշ ժամկետներում մեծ չափով ցանք կատարել: Այս դեպքում տվյալ հարցը նպաստավոր պայմաններում լուծվում է սոխի չորացման կամ կոնսերվացման միջոցով: Կոնսերվի գործարանները կարծ ժամկետում կարող են մեծ քանակությամբ սոխի հատակներ տալ աշնանը կամ, որ ավելի ցանկալի կլիներ, գարնանը. վերջին գեղքում լավ կլիներ, եթե մթերմած գլուխ սոխն աշնանից լավ չորացվեր ու ձմեռը պահվեր տաքացրած պահեստներում և որպեսզի հատակները գարնանն օդտագործվեն գլուխ սոխ ստանալու համար:

Ինչպես արդեն ասվեց, սոխի հատակը ոչնչացնելը (նախօրոք կտրելը կամ դաշելը) որոշ չափով նպաստում է մթերային սոխն ավելի երկար ժամանակ պիտանի միջակում պահելու առաջանանքի: Այն, ինչ կիրառվում է չայաստանի մի քանի շրջաններում:

բուժ կարելի է հանձնարարել ավելի լայնորեն կիրառել նաև ուրիշ տեղերում:

Մեր փորձերը ցույց ավին, որ հատակը կտրած մթերային սպառ մինչև +3°-ի տակ, ցուրտ պահեստներում կարելի է պահել ավելի քան 2 ամիս. այդ ջերմաստիճանի տակ միկրոօրդանիզմները գործել չեն կարող: Բայց կտրած սոխը չպետք է մեծ կույտերով դարսել, քանի որ դրանով կեղաստվում է նա, իսկ մեծ կույտերում կարող են սկսել ու զարգանալ միկրոբուլոգիական պրոցեսներ ու փչացնել մթերքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գլուխ սոխի հատակն օժաված է գլուխ սոխի բիոլոգիական բոլոր հատկություններով. գլուխ սոխի մսալի թեփուկները աննդանյութերի պաշար են հանդիսանում հատակից սկիզբ առնող բույսի համար: Սոխից ինքնուրուցյն բույս առաջանալու և նրա հետագա զարգացման համար բավական է մսալի թեփուկների շատ ավելի փոքր քանակություն, քանի այն, ինչ որ գտնվում է գլուխ սոխի մեջ:

2. Ելնելով դրանից, փորձնական տվյալներով ապացուցվում է, որ մթերային գլուխ սոխի հատակը ցանքի լավ մատերիալ է. դրանով կատարած ցանքից կարելի է ստանալ և կանչ սոխ, և՝ սոխի սերմ և՝ գլուխ սոխ: Այդ տեսակեալից մեծ դժուխ սոխի հատակը նույն տիպի ցանքի մատերիալ է, ինչ որ սեռուկը: Ուստի մթերային դժուխ սոխը կարելի է օգտագործել երկու ուղղությամբ—մսալի թեփուկները՝ սննդի համար, հատակը՝ ցանքի համար:

3. Յարովիլացիայի ենթարկված գլուխ սոխից և նրա հատակից ստացվում են 100%-ով ծաղկացողուն տվյալ բույսեր: Բայց, իբրև ընդհանուր երեսույթ, նկատված է, որ այդ նույն սոխը հողում առաջացնում է նաև փոքր սոխուկներ—սոխի նոր գլուխներ՝ 10—20 դրամ միջին քաշով: Յարովիլացիայի չենթարկված սոխից և նրա հատակից ստացվում են միայն նոր գլուխ սոխեր՝ առանց ծաղկացողունիք:

4. Յարովիլացիայի ենթարկված գլուխ սոխից կամ նրա հատակից, եթե նախացանքային ջերմային մշակություն է կատարվել, ստացվում են բույսեր, որոնց մեջ պակասում է ծաղկացողուն տվյալ բույսերի թիմը. դրան զուգընթաց հողում ա-

ռաջանում են ավելի՝ խոշոր քաշի լիարժեք նոր գլուխ սոխեր՝ մինչև 180 դր միջին քաշով։ Այս տեսակետից սոխի հատակն էրը ցանքի մատերիալ, դարձյալ նմանլում է անոկին։

5. Մեծ գլուխ սոխը, ինչպես նաև նրա կեսը, քառորդը և հատակը, առաջացնում են նույն տիպի բույսեր՝ նորմալ սերմատվությամբ։ Կես սոխը պղակալիկորեն նույնքան սերմ է տպել, որքան և լրիս սոխը։ սերմատվության մեծ անկում է նկատվել կեսից քառորդ սոխին անցնելու։ սոխի հատակը նույնքան սերմ է տպել, որքան և քառորդ սոխը։ Համեմատարար մանր լրիս սոխերը (13 դր քաշով) գրեթե նույնքան սերմ են տպել, որքան և մեծ գլուխ կեսը (30 դր քաշով) և քիչ պակաս՝ քան մեծ լրիս սոխը։ Նշանակում է, որ սերմ ստանալու համար իրեւ ցանքի մատերիալ կարելի է օգտագործել ինչպես մեծ գլուխ կեսը, այնպես էլ համեմատարար մանր գլուխ սոխերը և հատակիները։

6. Սոխի այն սերմերը, որոնք ստացվել են սոխի հատակներից և մանր սոխերից, ինչպես նաև ջերմային մշակության ենթարկված ու չենթարկված գլուխ սոխերից ու նրանց հատակներից, իրենց հատկություններով (բացարձակ քաշը, ծլունակությունը և ծրման էներգիան), ոչնչով հետ չեն մնում այն սերմերից, որոնք ստացվել են լրիս մեծ գլուխ սոխից։

7. Սոխի հատակը կենսունակ վիճակում երկար պահելու համար առաջարկում ենք առաջման օգտվել ցրտից, որի մեջ նրանք համեմատարար երկար ժամանակ մնում են կենդանի։ Այդ նպատակով կարելի է օգտվել ինչպես ձմռան բնական ցըրտից, այնպես էլ սառցատներից։ Գարնանը կտրած հատակներով կարելի է անմիջապես ցանք կատարել, հետեւարար և վերանում է նրանց պահելու անհրաժեշտությունը։

8. Մթերացին գլուխ սոխն ավելի երկար ժամանակ է պահպատճենի վիճակում, եթե հեռացվում է կամ ոչնչացվում նրա հատակը, որովհետեւ այդպիսի սոխը զրկվում է ծլելու հնարայիրությունից։

9. Ելնելով մեր այս հետազոտություններից, առաջարկում ենք, իրեւ լրացնելու չափանիկ մատերիալ, օգտագործել մթերացին գլուխ սոխի հատակը։ Դա կարող է տալ և՛ կանաչ սոխ՝ առարվա բոլոր եղանակներին, և՛ սոխի սերմ՝ եթե յարովիրացված է հատակը, և՛ գլուխ սոխ, եթե հատակը յարովիրացված է, կամ եթե ցանելուց առաջ ենթարկվում է ջերմային մշա-

կության: Մեր այս առաջարկն ավելի մեծ նշանակություն կտրող է ունենալ այն մարդերի և ռայոնների համար, որտեղ սոխի սերմով կատարված ցանքից առաջին տարում դլուխ սոխ չի ստացվում (հյուսիսային մարզերում, Սիբիրում, լեռնային չըրջաններում): Այս առաջարկը մեծ նշանակություն կարող է ունենալ նաև սոխի սերմաբուժությամբ զբաղվող տնտեսությունների համար, որովհետեւ որանով կարելի կլինի ստանալ սոխի սերմի լրացուցիչ քանակություն գրա համար օգտագործելով սոխի անարժեք համարված հատակը:

10. Իբրև ցանքի մատերիալ, մթերային սոխի հատակները կարելի է կենսարոնացած կարգով ձեռք բերել սոխ վերամշակող և չորացնող կոնսերվի գործարաններից և հանրային ճաշարաններից. կարելի է կազմակերպել նաև հատակների հավաքը բնակչության մեջ: Սոխի հատակներով ցանքը կարելի է կատարել և՝ մեծ մասշտաբով, սովորողներում ու կոլլուգներում; և՝ փոքր տարածություններով՝ անհատական օգտագործման հողամասներում, բանվորական օժանդակ տնտեսություններում և այլն:

11. Սոխի հատակը ցանքի համար օգտագործելու դորձը նոր է և դեռ ուսումնասիրելու հարցեր շատ կան. առանձնապես կարիք կա աշխատանք կատարել կտրած հատակները երկար ժամանակով կենսունակ պահելու, ինչպես նաև կատարված ցանքից մեծ քանակությամբ սլրողուկցիա—սերմ կամ գլուխ սոխ ստանալու համար:


ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԶԱՆԳ

ՄԹԵՐԱՅԻՆ ԳԼՈՒԽ ՍՈԽԻ ՀԱՏԱԿԸ ԿՑՐԵԼՈՒ, ՊԱՀԵԼՈՒ ԵՎ
ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՕԴՏԱԴՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գլուխ սոխի հատակը նրա այն մասում է գանվում, որտեղից դուրս են դալիս արմատները։ Սոխն ուտելուց տառջ նրա հատակը սովորաբար կտրում են ու զցում, որպես ավելի կոպիտ և ոչ-սննդառու մաս։ Սոխի հատակի վրա զանվում են ապագա սոխի սաղմային բողոքները՝ քնած գրությամբ։ Փարձերը ցույց են տվել, որ այդ հատակը կարող է օգտագործվել ցանելու համար, եթե կտրելու նրա վրա թողնվում է մասի թեփուկների մի վոքք քանակություն։ Այդպիսի ցանքեց կտրելի է սոտանալ կանաչ սոխ, գլուխ սոխ կամ սոխի սերմ։ Այսպիսով սատցում է սոխի համար լրացուցիչ ցանքի մատերիալ՝ գրեթե առանց պահանջնելու սոխի մթերային մասը։

2. Սոխի հատակը ցանքի համար պետք է կտրել մաքուր և սուր դանակով՝ միամղամայն առողջ և լրիվ հասունացած գլուխ սոխերից։ Այն գեպքում, երբ սոխի հատակը երկարավուն դուրս ցցված ձև ունի, այն պետք է կտրել ուղիղ, մինչև 1 ոմ քարձրության վրա (նկ. 11)։ Սոխի այն գլուխներից, որոնց հատակը հարթ դիրք ունի, լավ է հատակը կտրել կոնաձև։ Կոնաձև հատումը կատարել դանակի սուր ծայրով, հատման գիծը վերցնելով արմատների գոտուց կես սանտիմետր հեռու և շբջանաձև կտրելով, հանել կոնաձև հատակը (նկ. 11)։ Հատակը

կտրելիս աշխատել անվնասո թողնել արմատները, ինչպես նաև
չպոկել հատակի վրա դանված արտաքին չոր թեփուկները:



Նկ. № 11. Հատակների հատման գծերը

3. Սոխի հատակը պետք է կտրել մթերային սոխն օդոտ-
գործելու ժամանակ: Վաղ դարնանից մինչև ուշ աշուն ընկած
ժամանակամիջոցում օդոտազործված գլուխ սոխի հատակները
կարելի է անմիջապես տնկել նախօրոք պատրաստված հողամա-
սում: Ուշ աշնանից մինչև վաղ դարնան ժամանակամիջոցում,
եթե հողը սառած է լինում, հավաքած հատակները կարելի է
տնկել ջերմոցներում կամ տաք ու լուսավոր սենյակներում
դրված և հողով լցրած արկղներում: Այդ գեպքում ձմեռավա-
կիսին անգամ կարելի է ունենալ կանաչ սոխ: Այդ կանաչ սո-
խուկներով գարնանը կարելի է շիթիլ անել գետնում և ստա-
նալ նորմալ բույս:

4. Զմեռվա ամիսների ընթացքում կուտակված հատակները,
եթե չեն կարող անմիջապես տնկվել, ապա պետք է պահվեն
գարնանը տնկվելու համար: Կտրված հատակները կենսունակ
միճակում պահելու դործին մեծ չափով խանդարում են միկրո-
օրդանիզմները, որոնք ջերմության նպաստավոր պայմաններում

գարդանալով, փշացնում են հատակը։ Միկրոօրգանիզմների դեմ պայքարելու և հատակները կենսունակ վիճակում պահելու համար առայժմ կարելի է օգտագործել ցուրտը հետևյալ կերպ։ Բնակարանի կամ շենքի այն մասում, որտեղ ձմեռված ընթացքում ջերմությունը 0° -ից մինչև $+3^{\circ}$ -ի սահմաններում է լինում (օրինակ, ցախատներում, ներքնատներում, չտաքացվող տապակեպատ պատշգամբներում, միջանցքներում և այլն) պահել մի արկղ և նրա կողքին՝ քիչ խոնավացրած մաքուր ավաղ։ Ամեն օր հավաքած հատակները դարսել արկղի մեջ և քիչ ավագով ծածկել. այդպես չերտ-չերտ շարելով, երբ արկղը լցվում է, այն տեղափոխել մի խոնավ դետնահարկ, գետնափոր խորչ, կամ եթե հնարավոր է, պահել սառցատներում $0+3^{\circ}$ ջերմաստիճանի տակ։ Գարունը բացվելուն պես, երբ չողամասում հնարավոր է տունկ կատարել, պետք է տեղափոխել սոխի հատակները և տնկել։

5. Որպեսզի հատակներով կառարված ցանքերից գլուխ սոխ ստացվի, այդ ցանքը պետք է կառարվի գարնանը, այն էլ այնպիսի հատակներով, որոնք կտրված են ամրող ձմեռը $15-18^{\circ}$ ջերմաստիճանի տակ պահաված գլուխ սոխից։ Աշնանը տնկված հատակներից լիարժեք գլուխ սոխ չի ստացվում։ Եթե հատակները կտրվել են ցուրտ պահեստներում պահաված սոխերից կամ աշնանից կտրված հատակներ են, որոնք պահելի են ցրտում, ապա նրանցից գլուխ սոխ ստանալու համար պետք է նախացանքային ջերմային մշակություն կատարել։ Դրա համար գարնանային ցանքից $8-10$ օր առաջ հատակները պետք է տաքացվեն $25-30^{\circ}$ -ի տակ (տերմոստատներում կամ հատուկ տաքացվող սենյակներում), առնվազը 7 օր, և ապա անմիջապես ցանվեն։

6. Սոխի սերմ ստանալու համար դարնանը պետք է օգտագործել այն հատակները, որոնք կարվել են ցրտի ենթարկված սոխերից կամ որոնք ամրող ձմեռը պահելի են ցրտում սովորական պահեստներում։ Այն բոլոր հատակները, որոնք կտրվել են աշնան ամիսներին և անմիջապես աշնանն էլ տնկվել են չողում ու ծլել, տալիս են սերմացու բույսեր։

7. Կանաչ սոխ ստանալու համար կարելի է օգտագործել ամեն պայքաններում պահած սոխի հատակը, եթե այն առհասարակ կենդանի է։ Այդ նպատակի համար ցանքը կարելի է կատարել տարվա բոլոր եղանակներին։

8. Հատակով տնկումները կատարել լայն մշակված, տեղա-

կան պարաբռանյութերով—գոմազբով և մոխրով պարաբռաց-
ված փափռել ու խոնակ հողում։ Տնկումները կատարել շարքե-
րով, պահպանելով միջարքային տարածություն 30 մմ և միջ-
բույսամին տարածություն 10—15 մմ։ Տնկումները կատարել
3—5 մմ խորությամբ։ Կանաչ տոխ տուանալու համար կարելի է
ավելի խիստ տնկել։ Ցանքին վերաբերող մյուս խնամքը—քաղ-
հանը, ջուրը և այլն—կատարել սովորական կարդով։

Մեր աշխատավորության լայն խավերի ուշադրությունը
հրավիրելով այս հարցի վրա, ցանկանում ենք, որ արտադրու-
թյան մեջ աշխատող ընկերները, առանձնարկես նախալեռնային
ու լեռնային շրջաններում աշխատող մասնագետները և կոլխոդ-
նիկները գրադվեն այս հարցերով։

Մասնագիտական հարցերով և ամեն տեսակ խորհուրդների
համար կարելի է դիմել հետեւյալ հասցեով։ Երեան, Արտվյան
մողոց № 123, ռեսուլուբյիկական Գիտա-հետազոտական Դաշտա-
վարական կայան։

ՕԳՏԱԿՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Академик Лысенко. „Переделка природы растений“.
2. Кюз и Брызганов „Овощеводство“ 1934г. Москва“.
3. Хаев и др. „Овощеводство“ 1939г. Москва.
4. Минин „Практикум по огородничеству“ 1928г. Москва
5. Павлов „Лук в контроле“ 1928г. Москва.
6. Михельман и Галькин „Семеноводство“ 1930г. Ростов.

Պատ. Խմբագիր Ա. Գալսյան

Վ.թ 00714. Պատվեր 142. Տիրաժ 1000. Տպագրական 21/4 մամ. Մեկ մամուչում
36480 նշան. Հեղինակային 1,6 մամ. Ստորագրված է տպագրության
10/III-43թ.

Հայոց հանրապետական առարքան, Երևան, 1943

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008228

Գիրք 1 ռ. 20 կ.

A II
18915